ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ

Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ՝

Ս. Եղիազարյանի (լիազորագիր տրված՝ 13.08.2019թ.)

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Կիրակոսյանի (պետակա գրանցման վկայականի համար՝ 271.020.01254)

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 06.08.2019թ.)

Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 20.08.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32 ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված և 07.08.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը. :

1. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32 ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունները:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հայտերի բացման ամսաթիվ է սահմանվել 23.07.2019թ. ժամը 12:00-ն, իսկ պարզաբանումների հարցման համար սահմանվել է 05.06.2019 18:26-18.07.2019 12:00-ն ընկած ժամանակահատվածը:

Ընկերության կողմից 12.07.2019թ. Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացվել է պարզաբանումների հարցում տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, սակայն Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից համապատասխան պարզաբանում չի ներկայացվել:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի շրջանակներում խախտվել է իր մասնակցության իրավունքը:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը, ինչպես նաև նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-5-րդ մասերը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին և/կամ գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանը, որպես սույն բողոքի ելքով շահագրգիռ կողմ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. հուլիսի 23, ժամը 12:00-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից Ընթացակարգի 1 և 3 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանը:

Իսկ արդեն նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները բավարարող փաստաթղթերը:

Ներկայացված բողոքով «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 12.07.2019թ. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի հրավերի շրջանակներում Armeps.am

համակարգի միջոցով պարզաբանում ստանալու նպատակով իբրև թե դիմել է գնահատող հանձնաժողովին և վերջիներիս կողմից պարզաբանման պատասխան չի ստացվել:

Սակայն թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 ծածկագրով բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի տեսաձայնագրությանը հետևելիս՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից հնչեցվեց տեսակետ, ըստ որի «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն 12.07.2019թ. ներկայացված հարցումը ուղարկվել է Armeps համակարգի միջոցով աշխատանքային ժամի ավարտից հետո՝ այսինքն ժամը 18:00-ից հետո և քանի որ համակարգից ավտոմատ կերպով 2 օր հետո ջնջվում են հարցումները, այդ պատճառով էլ հաջորդող աշխատանքային օրը՝ այսինքն երկուշաբթի օրը, համակարգից արդեն ջնջվել է պարզաբանման նպատակով կատարված հարցումը:

Գտնում ենք, որ ներկայացված բողոքն անհիմն է, դրանում ներկայացված փաստերը հիմնավորված չեն որևէ ապացույցով, ուտի «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. կողմից ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 բողոքը ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Ինչպես արդեն նշել ենք, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 12.07.2019թ. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի հրավերի շրջանակներում Armeps.am համակարգի միջոցով պարզաբանում ստանալու նպատակով, իբրև թե, դիմել է գնահատող հանձնաժողովին: Սակայն նշված բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստը որևիցե ապացույցով հիմնավորված չէ: Բողոքին կից ներկայացվել է ընդամենը անհասկանալի բնույթը արտատպում էլեկտրոնային հասցեից, ինչը չի կարող դիտարկվել որպես հիմնավոր ապացույց առ այն, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն իրականում 12.07.2019թ. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի հրավերի շրջանակներում armeps.am համակարգի միջոցով պարզաբանում ստանալու նպատակով դիմել է գնահատող հանձնաժողովին: Նշված փաստը հնարավոր էր ապացուցել, օրինակ ՀՀ ֆինանսների նախարարությանը հարցում կատարելու և համապատասխան պաշտոնական պատասխան ստանալու միջոցով: Օրինակ, վերոհիշյալ փաստի իսկությունը ստուգելու համար Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանը համապատասխան հարցում է ներկայարել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ներկայացված բողոքով «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ պարզաբանում չստանալու արդյունքում խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ մասնակցի մասնակցության իրավունքը, և դրա հետևանքով պահանջել չեղյալ, չկայացած հայտարարել ողջ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթը: Մինչդեռ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել է իր կողմից կատարված հարցման /եթե դա իհարկե, կատարվել է/ բովանդակությունը, որից ակնհայտ չի երևում, որ ներկայացված հարցումը արդյոք վերաբերել է Ընթացակարգի բոլոր չափաբաժիններին: Միևնույն ժամանակ պարզաբանման տեքստի ուսումնասիրությունից պարզ կդառնար, թե արդյոք այդ պարզաբանման պատասխանը չստանալը իրականում խոչընդոտել է տվյալ մասնակցի մասնակցության իրավունքի իրացմանը: Քանի որ լոկ պարզաբանմանը պատասխան չստանալը ինքնին, մեր կարծիքով, ողջ ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմք չէ:

Երևանի քաղաքապետարանը սույն բողոքի քննության ժամանակ հայտնեց, որ 12.07.2019թ. ներկայացված հրավերի նկատմամբ պարզաբանման խնդրանքը ուղարկվել է Armeps համակարգի միջոցով աշխատանքային ժամի ավարտից հետո՝ այսինքն ժամը 18:00-ից հետո, այդ իսկ պատճառով 2 օր հետո այդ պարզաբանում ներկայացնելու պահանջը ջնջվել է Armeps համակարգից, և համապատասխանաբար 15.07.2019թ. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցումը այլևս տեսանելի չէր «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին: Կարծքում ենք, որ նախ, անհրաժեշտ է պարզել, արդյոք վերոհիշյալը համապատասխանում է իրականությանը, և արդյոք դա պայմանավորված է Armeps համակարգի կարգավորումներով: Միևնույն ժամանակ եթե պարզաբանման պատասխան չներկայացնելը պայմանավորված է եղել Armeps համակարգի համապատասխան կարգավորումներով, ապա այս դեպքում բացակայում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի մեղքը, այսինքն գնահատող հանձնաժողովը այդ դեպքում թույլ չի տվել գնումների մասին ՀՀ օրենսդրության որևիցե խախտում: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ եթե ստեղծված իրավիճակը պատճառը Armeps համակարգի կարգավորումներն են, ապա նման դեպքում ընթացակարգը չպետք է հայտարարվի չկայացած, քանի որ այս դեպքում էլ կխախտվի Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանի իրավունքները և օրինական շահերը:

Ամփոփելով վերոգրյալը, վերջինս խնդրել է մերժել «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 ծածկագրով բողոքը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում հարցումը Armeps համակարգի միջոցով ուղարկվել է 12.07.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո, և քանի որ համակարգից ավտոմատ 2 օր հետո ջնջվել է պարզաբանման նպատակով կատարված հարցումը, ուստի հաջորդող աշխատանքային օրը՝ երկուշաբթի օրը, Երևանի քաղաքապետարանի համար արդեն իսկ տեսանելի չի եղել Ընկերության կողմից ներկայացված հարցումը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 23.07.2019թ. ժամը 12:00-ին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ «Պեցցո» ՍՊԸ-ն, «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ն և Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանը:

4. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից 12.07.2019թ. Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացվել է հարցում տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, սակայն Պատվիրատուի կողմից համապատասխան պարզաբանում չի տրվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի 06.08.2019թ. բողոքը, «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի հրավերը, բողոքի շրջանակներում Ա/Ձ Մարինե Միհրանի Կույումջյանի կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 29-րդ հոդվածի 1 - 6-րդ մասերի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը

տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. ***Պարզաբանում չի տրամադրվում, եթե*** հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե ***հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:*** Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, իսկ փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին:

5. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից:

6. Սույն հոդվածի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչը ԳԲՔԱ-ՆԳ-2019/59 բողոքի քննության շրջանակներում հայտնել է, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից հարցումը Armeps համակարգի միջոցով ուղարկվել է 12.07.2019թ. աշխատանքային ժամի ավարտից հետո, և քանի որ համակարգից 2 օր հետո ինքնաշխատ կերպով ջնջվել է պարզաբանման նպատակով կատարված հարցումը, ուստի հաջորդող աշխատանքային օրը՝ երկուշաբթի օրը, Երևանի քաղաքապետարանի համար արդեն իսկ տեսանելի չի եղել Ընկերության կողմից ներկայացված հարցումը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված բողոքի հիմքերի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված 21.08.2019թ գրությամբ դիմել է Ընկերությանը՝ հնարավորինս սեղմ ժամկետում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրելու «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուին ներկայացված հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցման բովանդակությունը՝ Armeps համակարգից «Նկարագրություն հարցման համար» կամ «Հավելված հարցման համար» բաժիններից արտատպված եղանակով:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Ընկերությունը 22.08.2019թ. գրությամբ հայտնել է, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուին ներկայացված հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցման բովանդակությունը Armeps համակարգի «Նկարագրություն հարցման համար» կամ «Հավելված հարցման համար» բաժիններում պահպանված չէ, ուստի նման տեղեկատվություն չի կարող տրամադրել:

Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ***Պարզաբանում չի տրամադրվում, եթե*** հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե ***հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:*** Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընկերությունը ներկայացված բողոքի շրջանակներում չի տրամադրել բողոքի բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված բողոքի փաստացի հիմքը, այն է՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/32» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուին ներկայացված հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցման բովանդակությունը, որի բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել թե որքանով է Ընկերության կողմից կատարված հարցումը Ընթացակարգի

հրավերի բովանդակության շրջանակներում, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում բողոքն անհիմն է և ենթակա է մերժման առարկայազուրկ լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից 06.08.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**